ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 01/2021

ԳԱԳԻԿ ՌԱՖԻԿԻ ԽԱՆԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 26 հուլիսի, 2021 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Գագիկ Ռաֆիկի Խանդանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2021 թվականի ապրիլի 27-ին հարուցված թիվ 01/2021 վարույթի նյութերը.

պարզեց.

I. Նախապատմություն

1. 2021 թվականի ապրիլի 22-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ Պետական ռեգիստր) պետի ժամանակավոր պաշտոնակատար Տ. Մկրտչյանի կողմից էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի միջոցով Հանձնաժողովին հասցեագրվել է դիմում:

2. Դիմումի մեջ ներկայացվել են տեղեկություններ այն մասին, որ 2020 թվականի մայիսի 4-ին Արամ Բաբայանը և Մխիթար Սարգսյանը կնքել են «Մուշ» ՍՊ

ընկերությունում (այսուհետ նաև՝ Ընկերություն) իրենց բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրեր, որոնցով որպես գնորդ հանդիսացել է Գագիկ Խանդանյանը:

3. Պայմանագրի կնքումից հետո՝ 07.05.2020 թվականին, Ընկերության միակ մասնակից Գագիկ Խանդանյանը կայացրել է որոշում՝ մասնակիցների մասով կանոնադրության փոփոխություն կատարելու (իրեն՝ որպես միակ մասնակից գրանցելու), գործադիր մարմնի ղեկավար Խ. Առաքելյանի լիազորությունները դադարեցնելու, Հ. Ստեփանյանին գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու և նշված փոփոխությունները գրանցելու համար Պետական ռեգիստր դիմում ներկայացնելու մասին:

4. Նույն օրը Գագիկ Խանդանյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա Հ. Ստեփանյանը դիմում է ներկայացրել Պետական ռեգիստր՝ հիշյալ փոփոխությունները գրանցելու նպատակով: Դիմումի հիման վրա 2020 թվականի մայիսի 11-ին Պետական ռեգիստրում կատարվել է Ընկերության մասնակիցների, կանոնադրության և գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն:

5. 2020 թվականի մայիսի 25-ին Ընկերության տնօրեն Հ. Ստեփանյանը Պետական ռեգիստր է մուտքագրել մեկ այլ դիմում, որով խնդրել է ի գիտություն ընդունել «Մուշ» ՍՊ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ 2020 թվականի մայիսի 12-ին կնքված պայմանագիրը: Պայմանագրի համաձայն Ընկերության միակ մասնակից Գագիկ Խանդանյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնվել նույն Ընկերության տնօրեն Հ. Ստեփանյանին:

6. Դիմումի մեջ նշվել է նաև, որ Գագիկ Խանդանյանը 2000-2016 թվականներին հանդիսացել է ՀՀ առաջին ատյանի դատարանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, իսկ 2016 թվականի հունվարի 8-ից ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր:

7. Դիմումին կից ներկայացվել են 2020 թվականի մայիսի 4-ին կնքված Մ. Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 50 տոկոս բաժնեմասի առուվաճառքի պայմանագրի, 2020 թվականի մայիսի 4-ին կնքված Ա. Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող 50 տոկոս բաժնեմասի առուվաճառքի պայմանագրի, Ընկերության միակ մասնակցի 2020 թվականի մայիսի 7-ի թիվ 001 որոշման, 2020 թվականի մայիսի 7-ին Պետական ռեգիստր հասցեագրված դիմումի,

2020 թվականի մայիսի 7-ին տրված լիազորագրի, 2020 թվականի մայիսի 12-ի հավատարմագրային կառավարման պայմանագրի պատճենները:

8. 2021 թվականի ապրիլի 27-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 01/2021 որոշումը՝ ներկայացված դիմումի հիման վրա անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

9. 2021 թվականի ապրիլի 30-ին որոշումը սուրհանդակային ծառայության միջոցով ուղարկել է Գագիկ Խանդանյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում քննարկվող հարցի առնչությամբ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

10. 2021 թվականի մայիսի 11-ին Գագիկ Խանդանյանը ներկայացրել է դիրքորոշում հարուցված վարույթի փաստական հանգամանքների վերաբերյալ:

11. Վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով Հանձնաժողովը գրավոր դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Պետական ռեգիստր, ՀՀ կադաստրի կոմիտե, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն և ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2021 թվականի ապրիլի 27-ի Հանձնաժողովի գրությանն ի պատասխան Գագիկ Խանդանյանը ներկայացրել է դիրքորոշում՝ հետևյալ հիմնավորումներով.

1. Վկայակոչելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը՝ Գագիկ Խանդանյանը նշել է, որ վերը նշված նորմերից բխում է, որ հանրային ծառայողների, այդ թվում նաև դատավորների համար առևտրային կազմակերպություններում մասնակցությունն արգելված չէ, սակայն այդ դեպքում բաժնեմասն ամբողջությամբ ենթակա է հանձնման հավատարմագրային կառավարման: Հավատարմագրային կառավարման հասկացությունը տրվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 954-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն.

«1. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի

(հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի):»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 956-րդ հոդվածի համաձայն.

«Հավատարմագրային կառավարման հիմնադիրը գույքի սեփականատերն է, իսկ սույն օրենսգրքի 968 հոդվածով նախատեսված դեպքերում՝ այլ անձը:»:

Գագիկ Խանդանյանը նշել է, որ վերը նշված նորմերի վերլուծության արդյունքում կարող ենք կատարել երկու դատողություն՝

1) հավատարմագրային կառավարման պայմանագիրը համարվում է ոչ թե կոնսենսուալ այլ ռեալ պայմանագիր՝ այսինքն համարվում է կնքված ոչ թե պայմանագրի երկկողմանի ստորագրման պահից, այլ այն պահից, երբ հանձնվում է կառավարման օբյեկտը:

2) կառավարման օբյեկտ կարող է լինել այն գույքը, որը պատկանում է կառավարման հիմնադրին սեփականության իրավունքով: Կոնսենսուալ պայմանագրերում կողմերի պարտականությունները՝ որպես պայմանագրով սահմանվող հիմնական իրավունքներ և պարտականություններ, շարադրվում են այնպես, որ կարող են կատարվել հետագայում՝ պայմանագրի երկկողմանի ստորագրումից հետո: Նման դեպքում, պայմանագրի ստորագրումը հանգեցնում է պայմանագրի կնքման և կողմերի իրավունքների ու պարտականությունների առաջացման:

Ռեալ պայմանագրերի դեպքում, միայն պայմանագրի ստորագրումը որևէ իրավական հետևանք չի առաջացնում, այլ պայմանագիրը համարվում է կնքված, եթե հանձնվում է մյուս կողմին: Սույն վարույթի շրջանակներում հավատարմագրային կառավարման օբյեկտը համարվել է առևտրային կազմակերպության բաժնեմասը, իսկ բաժնեմասի սեփականատիրոջ փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

2. Վկայակոչելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 3-րդ և 42-րդ հոդվածները, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ և 449-րդ հոդվածները, Գագիկ Խանդանյանը նշել է, որ բաժնեմասի օտարման պայմանագրից

ծագող փոփոխությունները, ինչպես նաև դրա հետ կապված կանոնադրության փոփոխությունները ենթակա են պետական գրանցման: Միայն պետական գրանցման պահից է, որ պետության կողմից ճանաչվում է բաժնեմասի սեփականության իրավունքի անցումը նոր մասնակցին: Հետևաբար, քանի դեռ բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը չի առաջացել, այդ գույքը չի կարող հանձնվել հավատարմագրային կառավարման, իսկ եթե այն չի կարող հանձնվել, ապա նախքան փոփոխությունների պետական գրանցումը հավատարմագրային կառավարման պայմանագիրը չէր կարող օբյեկտիվորեն կնքվել, քանի որ հավատարմագրային կառավարման պայմանագիրը համարվում է ռեալ պայմանագիր և համարվում է կնքված առարկան հանձնելու պահից:

3. Գագիկ Խանդանյանը նշել է նաև, որ Ընկերության միակ մասնակից դառնալուց հետո մինչև բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելն ընկած ժամանակահատվածը եղել է ընդամենը հինգ օր, որոնց ընթացքում առավելագույն սեղմ ժամկետներում իրականացվել են միայն այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են եղել հավատարմագրային կառավարման հանձնելու համար նախապայմաններ ստեղծելուն: Նույնը վերաբերում է նաև տնօրենի նշանակման որոշմանը, որը կայացվել է 100 տոկոս մասնակցության փոփոխության հետ:

Վկայակոչելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումները՝ Գագիկ Խանդանյանը նշել է, որ նշված կարգավորումը վերաբերում է այն դեպքերին, երբ բաժնետեր դառնալու ժամանակ, արդեն իսկ անձը համարվել է հանրային ծառայող, այդուհանդերձ առանձնահատուկ է այն, որ օրենքը սահմանում է 30 օր հավատարմագրային կառավարման հանձնելու համար, որը նշանակում է, որ օրենսդիրը ևս իրավաչափ է դիտարկում որոշակի ժամանակահատվածի տրամադրումը նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու համար: Գագիկ Խանդանյանը նշել է, որ եթե օրենսդիրը թույլատրում է այդ իրավիճակում արդեն իսկ հանրային ծառայության անցած անձին երեսուն օր իրականացնել ընկերության կառավարում ցանկացած հարցում և ընդունել ցանկացած որոշում, ապա սույն վարույթով գործի դեպքում իրավաչափ չի կարող համարվել տարբերակված մոտեցում դրսևորելն այն իրավիճակների համար, երբ անձը, ընկերության միակ մասնակից դառնալով, անմիջապես ընդունել է որոշումներ

տնօրենի և կանոնադրության փոփոխության մասին և գրանցումից հետո բաժնեմասն ամբողջությամբ հանձնել է հավատարմագրային կառավարման:

4. Գագիկ Խանդանյանը նշել է նաև, որ բոլոր դեպքերում, անգամ եթե իրավական տեսանկյունից բաժնեմասը հնարավոր լիներ հանձնել կառավարման նախքան մասնակցի փոփոխության գրանցումը, ապա միայն ձևական առումով անհամատեղելիության պահանջները չեն կարող համարվել խախտված, երբ հանրային ծառայողի գործողությունները վկայում են, որ վերջինս ձեռնարկատիրական գործունեությանն ուղղված որևէ գործողություն փաստացի չի ձեռնարկել, իրականացրել է բոլոր ողջամիտ քայլերը՝ առավելագույն սեղմ ժամկետում բաժնեմասը հանձնելու հավատարմագրային կառավարման, իսկ դրա հանձնումը ընկերության մասնակից դառնալուց հետո, այլ ոչ թե առաջ, կրել է օբյեկտիվ բնույթ:

5. Վկայակոչելով Հանձնաժողովի 2020 թվականի մարտի 6-ի թիվ 06/2019 եզրակացությունը՝ Գագիկ Խանդանյանը մեջբերել է, որ նշված եզրակացությունում Հանձնաժողովը պարզաբանել է, որ փաստերն ու իրավակարգավորումները վերլուծելիս անհրաժեշտ է օրենքին անդրադարձ կատարել՝ ձևական և բովանդակային առումով: Հանձնաժողովը գտել է նաև, որ առկա է օրենքի ձևական խախտում, սակայն ըստ էության օրենքի խախտում առկա չէ, քանի որ ընկերությունները փաստացի գործունեություն չեն իրականացրել: Հանձնաժողովը նշել է նաև, որ օրենքի պահանջների ձևական խախտման դեպքում օրենքի բովանդակության խախտումից բխող խիստ հետևանքների կիրառումը կսահմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը:

Համադրելով երկու վարույթների փաստական հանգամանքները՝ Գագիկ Խանդանյանը նշել է, որ Հանձնաժողովի կողմից տրված մեկնաբանությունների տեսանկյունից ևս, ըստ էության, օրենքի խախտումը սույն վարույթով բացակայում է և խնդրել է ընդունել եզրակացություն անհամատեղելիության պահանջների խախտման բացակայության մասին:

III. Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վարույթի շրջանակներում պարզված փեղեկություններ.

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, վարույթի մասնակիցներից ստացված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

1. Մ. Սարգսյանը և Ա. Բաբայանը 2020 թվականի մայիսի 4-ին կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագրերով պարտավորվել են Գագիկ Խանդանյանին որպես սեփականություն հանձնել «Մուշ» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալում իրենց սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասերը:

2. 2020 թվականի մայիսի 11-ին Պետական ռեգիստրում կատարվել է Ընկերության մասնակիցների փոփոխություն, որի արդյունքում Ընկերության միակ մասնակից է դարձել Գագիկ Խանդանյանը:

3. 2020 թվականի մայիսի 12-ին Գագիկ Խանդանյանի և «Մուշ» ՍՊ ընկերության միջև կնքվել է հավատարմագրային կառավարման պայմանագիր, որով Ընկերության միակ մասնակից Գագիկ Խանդանյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող «Մուշ» ՍՊ ընկերության բաժնեմասը հանձնել է կառավարչի՝ «Մուշ» ՍՊ ընկերության կառավարմանը:

4. 2021 թվականի մարտի 11-ին կնքված համաձայնագրերով կողմերի փոխադարձ համաձայնությամբ 2020 թվականի մայիսի 4-ին կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագրերը լուծվել են:

5. 2021 թվականի մայիսի 27-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Մուշ» ՍՊ ընկերությունը գործել է մինչև 2021 թվականի փետրվարի 18-ը, ընկերության գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է եղել 2021 թվականի փետրվարի 18-ից մինչև 2021 թվականի մայիսի 24-ն ընկած ժամանակահատվածում: Միաժամանակ ներկայացվել է տեղեկատվություն Ընկերության գործունեության ոլորտների և տարեկան կտրվածքով Ընկերության համախառն եկամտի և հարկվող շահույթի վերաբերյալ:

6. 2021 թվականի հունիսի 7-ին ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից ներկայացվել է տեղեկատվություն այն մասին, որ «Մուշ» ՍՊ ընկերության անվամբ 2020 թվականի մայիսի 4-ի դրությամբ սեփականության իրավունքով գրանցված, հաշվառված տրանսպորտային միջոցներ չկան:

7. 2021 թվականի հունիսի 7-ին Պետական ռեգիստրի կողմից ներկայացվել է տեղեկատվություն այն մասին, որ «Մուշ» ՍՊ ընկերությունը հանդիսացել է «Հայաստանի մսամթերք արտադրողների միություն» իրավաբանական անձանց միության հիմնադիր/մասնակից, որը լուծարվել է 07.06.2019 թվականին: Ներկայացվել է նաև տեղեկատվություն այն մասին, որ «Մուշ» ՍՊ ընկերության արխիվային գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 07.11.2012 թվականին Պետական ռեգիստրում գրանցվել է «Մուշ» ՍՊ ընկերության վերակազմակերպում միացման եղանակով, և «Մուշ» ընկերությանն է միացել «ՍԻ ՋԻ ԷՄ ՈՒԱՆ» ՓԲ ընկերությունը, որի միակ բաժնետեր է հանդիսանում «Մուշ» ՍՊ ընկերությունը՝ համաձայն Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված քաղվածքի: «ՍԻ ՋԻ ԷՄ ՈՒԱՆ» ՓԲ ընկերությունը 07.11.2012 թվականին դադարեցրել է իր գործունեությունը վերակազմակերպման արդյունքում:

8. 2021 թվականի հունիսի 15-ին ՀՀ կադաստրի կոմիտեից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ ՀՀ, ք. Երևան Շիրակի փողոց թիվ 97 հասցեի անշարժ գույքը 2017 թվականի սեպտեմբերի 4-ին սեփականության իրավունքով գրանցվել է «Մուշ» ՍՊ ընկերության անվամբ: Միաժամանակ ներկայացվել է տեղեկատվություն այն անշարժ գույքերի վերաբերյալ, որոնց օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում է իրականացվել «Մուշ» ՍՊ ընկերության կողմից:

Դատավորի գործունեությանն առնչվող տեղեկություններ

Սույն վարույթի շրջանակներում ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքից (court.am) ստացված տվյալների համաձայն Գագիկ Խանդանյանը 2016 թվականի հունվարի 8-ից ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր:

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. 2016 թվականի հունվարի 8-ից մինչ օրս Գագիկ Խանդանյանը զբաղեցնում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի պաշտոնը:

2. 2020 թվականի մայիսի 4-ին կնքված բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրերով Գագիկ Խանդանյանը ձեռք է բերել «Մուշ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասը:

3. 2020 թվականի մայիսի 7-ին որպես Ընկերության միակ մասնակից Գագիկ Խանդանյանը որոշում է կայացրել Ընկերության կանոնադրությունում մասնակիցների կազմի հետ կապված փոփոխություններ կատարելու, գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու, Ընկերության գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու և փոփոխությունները գրանցելու համար Պետական ռեգիստր դիմում ներկայացնելու վերաբերյալ:

4. 2020 թվականի մայիսի 11-ին Պետական ռեգիստրում կատարվել է Ընկերության մասնակիցների փոփոխություն, որի արդյունքում Ընկերության միակ մասնակից է դարձել Գագիկ Խանդանյանը:

5. 2020 թվականի մայիսի 12-ին Գագիկ Ռաֆիկի Խանդանյանի և «Մուշ» ՍՊ ընկերության միջև կնքվել է հավատարմագրային կառավարման պայմանագիր, որով Ընկերության միակ մասնակից Գագիկ Խանդանյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող «Մուշ» ՍՊ ընկերության բաժնեմասը հանձնել է կառավարչի՝ նույն «Մուշ» ՍՊ ընկերության կառավարմանը, որի անունից հանդես է եկել Ընկերության տնօրեն Հ. Ստեփանյանը:

V. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող՝ միջազգային փաստաթղթերում առկա կանոններ

Դատավորների կարգավիճակի և դրանից բխող՝ դատավորի գործունեության անհամատեղելիության պահանջների վերաբերյալ կարգավորումներ նախատեսված են ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթերով:

1. Այսպես, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽԽ) իր Կարծիք թիվ 3 (2002) փաստաթղթում արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝ դատավորի անկախությունը առանցքային սկզբունք է և յուրաքանչյուր պետության քաղաքացու, այդ թվում՝ դատավորի իրավունքն է: Դատավորների անկախությունն ունի թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ անհատական ասպեկտ:

Ժամանակակից ժողովրդավարական պետությունը պետք է հիմնվի իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Յուրաքանչյուր դատավոր պետք է անի ամեն ինչ՝ ապահովելու դատական անկախությունը թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ անհատական մակարդակներում: Նման անկախության տրամաբանությունը մանրամասն քննարկված է ԵԴԽԽ թիվ 1 (2001) կարծիքի 10-13-րդ պարբերություններում: Ինչպես նշված է այդ պարբերություններում՝ դատական անկախությունն անբաժանելիորեն կապված է դատավորի անաչառության հետ և դրա նախապայմանն է հանդիսանում, ինչն առանցքային է դատական համակարգի արժանահավատության և վստահելության համար, որը պետք է ոգեշնչման աղբյուր հանդիսանա ժողովրդավարական հասարակության համար:[1]

2. 1985 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից կազմված «Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներ» փաստաթղթի 2-րդ հոդվածում սահմանվում է, որ «դատական իշխանությունը պետք է դատարան ներկայացված գործերով որոշումներ ընդունի՝ պահպանելով անաչառությունը, հենվելով փաստերի վրա և օրենքի համաձայն, առանց որևէ անձի կողմից կամ որևէ պատճառով ուղղակի կամ անուղղակի սահմանափակումների, անհարկի ազդեցության, դրդումների, ճնշումների, սպառնալիքների, անհարկի ազդեցության, դրդումների ճնշումների, սպառնալիքի կամ միջամտությունների»: 8-րդ հոդվածի համաձայն՝ «դատավորները պետք է մշտապես իրենց դրսևորեն այնպես, որ պահպանեն իրենց պաշտոնի արժանապատվությունը, ինչպես նաև դատական իշխանության անաչառությունը և անկախությունը»[2]:

3. Դատական գործառույթի հատուկ բնույթը և պաշտոնի արժանապատվությունը բարձր պահելու, ինչպես նաև դատավորներին ճնշումների բոլոր տեսակներից բարձր պահելու անհրաժեշտությունը ենթադրում է, որ դատավորներն իրենց պետք է դրսևորեն այնպես, որ խուսափեն շահերի ցանկացած բախումից կամ իշխանության չարաշահումից: Որոշ պետություններում դատավորի գործառույթների հետ անհամատեղելիությունը հստակ սահմանվում է դատավորների գործունեության մասին օրենքով, որոնց համաձայն՝ դատական համակարգի անդամներին չի թույլատրվում զբաղվել մասնագիտական կամ վճարովի որևէ այլ

[1] ԵԴԽԽ թիվ 3 (2002) կարծիք, 16-րդ պարբերություն
[2] ԵԴԽԽ թիվ 3 (2002) կարծիք, 17-րդ պարբերություն

գործունեությամբ: Բացառությունները վերաբերում են կրթական, հետազոտական գիտական, գրական կամ արվեստի ոլորտի աշխատանքներին:[3]

4. ԵԴԽԽ-ն պաշտպանում է այն տեսակետը, որ դատական մանդատից դուրս գործունեություն իրականացնելու ազատությունը «կարող է չսահմանափակվել, բացառությամբ, եթե նման գործունեությունը անհամատեղելի է դատավորների նկատմամբ վստահության, դատավորի անաչառության կամ անկախության, կամ դատական գործերով ամենայն ջանասիրությամբ և ողջամիտ ժամկետում զբաղվելու նրա կարողության հարցում: Առանցքային է, որ դատավորները իրենց ժամանակի մեծ մասը նվիրեն դատական գործին, այդ թվում՝ հարակից աշխատանքներին, և չգայթակղվեն իրենց ուշադրությունը դատարանից դուրս գործունեությանը նվիրելու հարցում:[4]

VI. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող՝ ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Դատավորի նկատմամբ կիրառելի են հանրային ծառայողի համար

[3] ԵԴԽԽ թիվ 3 (2002) կարծիք, 37-րդ պարբերություն
[4] ԵԴԽԽ թիվ 3 (2002) կարծիք, 39-րդ պարբերություն

ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված կարգավորումները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավորը պետք է ձգտի կառավարել իր ներդրումներն այնպես, որ նվազագույնի հասցնի այն գործերի քանակը, որոնցով նա պետք է ինքնաբացարկ հայտնի:

3. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 159-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով անհամատեղելիության պահանջների խախտումը հիմք է հանդիսանում Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դատավորի լիազորությունները դադարեցնելու համար:

4. «Հանրային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանվում են հանրային ծառայողի հիմնական պարտականությունները, որի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին հետևելը հանդիսանում է հանրային ծառայողի հիմնական պարտականությունները:

5. Նույն օրենքի 31-րդ հոդվածով հանրային ծառայողի համար սահմանվել է արգելք ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

6. «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանվում են առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունները:

«Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության

մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

(…)

Նույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) անհատ ձեռնարկատեր լինելը.

2) առանց պետական գրանցման կամ հաշվառման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում.

3) առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

7. «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:

8. Նույն օրենքի 7-րդ հոդվածում սահմանված ինքնավար պաշտոնների շրջանակում ներառված են նաև վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորների պաշտոնները:

9. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 954-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի):

10. Նույն օրենսգրքի 957-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հավատարմագրային կառավարիչը կարող է լինել անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն: (...)

VII. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը.

1. Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ոչ միայն նախատեսել է հստակ ժամկետ, որի ընթացքում հնարավոր կլինի առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասը հանձնել հավատարմագրային կառավարման, այլ տվյալ հնարավորությունը սահմանափակել է անձի՝ հանրային կամ հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու (ընտրվելու) դեպքով:

2. Օրենսդրական նման կարգավորումներից բխում է, որ առևտրային կազմակերպության մասնակից լինելը ձեռնարկատիրական գործունեություն չի դիտարկվի երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ երբ անձը մասնակից է եղել առևտրային կազմակերպությանը մինչև պաշտոնի նշանակվելը և, երբ պաշտոնի նշանակելուց հետո առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

Նման իրավակարգավորումներից հետևում է, որ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցության արգելքը բացարձակ է, ինչը ենթադրում է, որ անձը պետք է զերծ մնա հնարավոր այնպիսի բոլոր գործողություններից, որոնց շրջանակում կարող է ձևավորվել այնպիսի վարքագիծ, որը կարող է որակվել որպես պետական պաշտոնին զուգահեռ անձի մասնակցության ու ազդեցության պահպանում այլ պաշտոնում՝ մասնակցություն ունենալով կամ այլ կերպ ներգրավված լինելով առևտրային կազմակերպության կողմից կայացվող որոշումներում, ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

3. Անհամատեղելիության պահանջների բովանդակային նշանակությունը հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար լրացուցիչ երաշխիք սահմանելն է, որի արդյունքում վերջիններս հնարավորություն կունենան

պաշտոնի նշանակվելուց կամ ընտրվելուց հետո մեկամսյա ժամկետում վերացնելու իրենց զբաղեցրած պաշտոնի հետ անհամատեղելի այլ գործունեությունը, դրանով իսկ բացառելով կամ նվազագույնի հասցնելով հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման իրավիճակները:

4. Իրավական նման կարգավորումների լույսի ներքո գնահատելով սույն վարույթում էական նշանակություն ունեցող փաստը՝ այն, որ 2020 թվականի մայիսի 4-ին կնքված առուվաճառքի պայմանագրերի հիման վրա Գագիկ Խանդանյանը ձեռք է բերել «Մուշ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարույթի փաստական հանգամանքները և դրա նկատմամբ կիրառելի իրավական հետևանքները տարբեր են 2019 թվականի դեկտեմբերի 9-ին Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի նկատմամբ հարուցված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի փաստական հանգամանքներից՝ հետևյալ հիմնավորմամբ.

2019 թվականի դեկտեմբերի 9-ին Հանձնաժողովի թիվ 06/2019 որոշմամբ հարուցված վարույթի շրջանակներում պաշտոնատար անձը պաշտոնը ստանձնելուց հետո օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը չէր հանձնել հավատարմագրային կառավարման: Նշված արարքին գնահատական տալու նպատակով Հանձնաժողովը վարույթի համար էական է համարում այն հանգամանքը, թե արդյոք առևտրային կազմակերպությանը մասնակից լինելուն զուգահեռ պաշտոնատար անձի կողմից պահպանել է նաև իր ազդեցությունն առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ: Այս համատեքստում 2019 թվականի դեկտեմբերի 9-ին Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի նկատմամբ հարուցված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում Հանձնաժողովը պարզել էր, որ պաշտոնատար անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները փաստացի գործունեություն չեն իրականացրել: Մասնավորապես, նշված վարույթի շրջանակներում պարզված փաստերի համաձայն՝ «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊ ընկերությունը փաստացի գործունեություն չէր իրականացրել 2009 թվականի փետրվարի 16-ից, «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊ ընկերությունը՝ 2009 թվականի փետրվարի 13-ից, իսկ «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությունը՝ 2013 թվականի դեկտեմբերի 1-ից:

Նշվածով պայմանավորված՝ թեև օրենքի ձևական առումով առկա է եղել խախտում, սակայն անձի հնարավոր ազդեցությունն այդ կազմակերպությունների գործունեության նկատմամբ բացառվում էր, քանի որ վերջիններս փաստացի գործունեություն չէին իրականացրել:

Մինչդեռ, սույն վարույթի շրջանակներում ձեռքբերված և հետազոտված ապացույցները փաստում են, որ «Մուշ» ՍՊ ընկերությունը 2020 թվականի մայիսի 4-ից մինչև 2021 թվականի փետրվարի 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է գործունեություն: Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է եղել միայն 2021 թվականի փետրվարի 18-ից մինչև 2021 թվականի մայիսի 24-ն ընկած ժամանակահատվածում (հիմք՝ Պետական եկամուտների կոմիտեի 27.05.2021 թվականի թիվ 01/71-6/32120-2021 գրություն):

5. Անհամատեղելիության պահանջի խախտումների առնչությամբ Հանձնաժողովն էական է համարում գնահատել, թե որքանով է պահպանվում պաշտոնատար անձի ազդեցությունը առևտրային կազմակերպության գործունեության վրա, և թե այդ ազդեցությունն ինչպես է դրսևորվում կամ ինչպես կարող է դրսևորվել:

Այս մոտեցումն արտահայտվել է նաև 2020 թվականի հուլիսի 6-ին Գագիկ Ծառուկյանի նկատմամբ հարուցված անհամատեղելիության կանոնների խախտման վերաբերյալ թիվ 03/2020 վարույթում: Նշված վարույթի շրջանակներում Հանձնաժողովն էական է համարել այն հանգամանքը, որ թեև պաշտոնատար անձը առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը հանձնել էր հավատարմագրային կառավարման, սակայն անձամբ մասնակցել էր ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովին, որի ընթացքում կատարվել էր ընկերության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն, ժողովի արձանագրությունը, որպես ժողովի նախագահ, ստորագրել էր պաշտոնատար անձը, միևնույն ժամանակ պաշտոնատար անձի՝ որպես ընկերության միակ մասնակցի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ էին կատարվել ընկերության կանոնադրության մեջ և նշված որոշումը ստորագրվել էր պաշտոնատար անձի կողմից:

Մինչդեռ, սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ պաշտոնատար անձն առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը ձեռք է բերել պաշտոնավարման ընթացքում և փաստացի ունեցել է կազմակերպության գործունեության վրա անմիջական ազդեցություն: Մասնավորապես, մինչև իրեն

պատկանող բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնելը Գագիկ Խանդանյանը հանդես է եկել անձամբ և 2020 թվականի մայիսի 7-ին որպես Ընկերության միակ մասնակից կայացրել է որոշում Ընկերության կանոնադրությունում մասնակիցների կազմի հետ կապված փոփոխություններ կատարելու, գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու, Ընկերության գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու և փոփոխությունները գրանցելու համար Պետական ռեգիստր դիմում ներկայացնելու վերաբերյալ, որով փաստացի իրականացրել է «Մուշ» ՍՊ ընկերության կառավարմանն ուղղված գործառույթներ:

6. Բացի այդ, նույնիսկ այն դեպքում, երբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հանձնվել է հավատարմագրային կառավարման, պաշտոնատար անձի հնարավոր ազդեցությունը կոնկրետ առևտրային կազմակերպության գործունեության վրա չի չեզոքացվել, քանի որ Գագիկ Խանդանյանի և «Մուշ» ՍՊ ընկերության միջև 2020 թվականի մայիսի 12-ին կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրով Ընկերության միակ մասնակից Գագիկ Խանդանյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող «Մուշ» ՍՊ ընկերության բաժնեմասը հանձնել է կառավարչի՝ նույն «Մուշ» ՍՊ ընկերության կառավարմանը, որի անունից հանդես է եկել Ընկերության տնօրեն Հ. Ստեփանյանը, ով նշանակվել է Գագիկ Խանդանյանի կողմից: Ըստ էության բաժնեմասը միակ սեփականատիրոջ կողմից հավատարմագրային կառավարման է հանձնվել նույն Ընկերությանը, ինչը փաստացի վկայում է, որ Ընկերության գործունեության վրա հնարավոր ազդեցությունը պահպանվել է:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ Գագիկ Խանդանյանը, իրականացնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 4-րդ, 7-րդ մասի 3-րդ կետերով նախատեսված արարքները, իր գործողություններով խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա

ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Գագիկ Ռաֆիկի Խանդանյանի կողմից խախտվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ	ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ	ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ	ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ	ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ